

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԴ. ՀԱՄԱՐԱԶՈՒՄՅԱՆ

ՍԻՐԱՔԻ ԳՐՔԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշունչ մատյանի երկրորդականոն գրքերի շարքում Սիրաքի Իմաստությունն առանձնանում է իր աստվածաբանական ու բարոյախրատական տարողունակ եւ համապարփակ բնույթով: Ի թիվս այլ հարցերի՝ Սիրաքն անդրադառնում է արդարության ու կարգապահության կարեւորությանը (ԺԸ.-ԻԳ.), դրվատում իմաստությունը (ԻԴ.) եւ գովերգում Իսրայելի նշանավոր նախնյաց հիշատակը (ԽԴ.-Ծ.)¹:

Սիրաքի գրքի հայերեն միակ մեկնությունը գրվել է ԺԸ. դարում եւ պատկանում է Հայ Եկեղեցու մեծանուն երախտավոր, Կոստանդնուպոլսի պատրիարք Հակոբ Նալյանի գրչին²:

Սույն հոդվածում մասնավոր կերպով ներկայացվելու են Հակոբ Նալյանի մոտեցումներն ու ընկալումները որոշ խնդիրների վերաբերյալ՝ միաժամանակ հատուկ շեշտադրում ունենալով օտար աղբյուրներում կատարված ուսումնասիրությունների վրա:

Չնայած այն փաստին, որ Հ. Նալյանի աշխատությունը Սիրաքի Իմաստության՝ հայերենով գրված առաջին ու միակ մեկնությունն է, այդուհանդերձ, այն ասքի է ընկնում նյութերի բազմակողմանի վերլուծությանը եւ յուրաքանչյուր թեմային հատկացված քննարկման խորությամբ: Օրինակ՝ խոսելով իմաստության ու դրա աղբյուրի մասին՝ Հ. Նալյանը նախ ներկայացնում է իմաստության ընկալումները հին հունական իմաստասիրության տարբեր ճյուղերում, որոնք եւ վերջում գուգաբանվում են քրիստոնեական նշանակությամբ:

1 Բացի երկու ձեռագրից (Երուսաղեմ, Ձեռ. 2558, 1615, էջ 369-381ա. Մ. Մ. Մատենադարան, Ձեռ. 5608, 1363, էջ 102ա-147բ), Սիրաքի գրքի՝ հայերենով պահպանված մյուս ձեռագրերում ԽԴ.-Ծ. գլուխները պակասում են: Նշյալ երկու ձեռագրում էլ այս գլուխները կիսատ են:

2 Այս մեկնությունը երբեք չի հրատարակվել, հետեւաբար, ըստ պատշաճի չի ուսումնասիրվել. պահպանված է տասնմեկ ձեռագրերում, որոնցից ամենահինը չորս այլ ձեռագրի հետ գտնվում է Երուսաղեմի Ս. Թորոս ձեռագրատանը: Մնացյալ հինգ ձեռագրերը պահվում են Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մեկը՝ Վիեննայի Մխիթարյան ձեռագրատան պահուստում: Հայտնի է նաեւ Սիրաքի մեկնության՝ հայերենով պահպանված ու Կապուտիկ վարդապետի գրչին պատկանող մի թարգմանություն, որ կատարվել է ԺԸ. դարում՝ Կոնստնդնուպոլսի Լյակիդայի համանուն մեկնությունից:

յան հետ՝ որպես «σοφία-λόγος»: Հ. Նալյանն ընդգծում է, որ Միրաքի նշած իմաստությունը հնարավոր է ձեռք բերել միայն այն դեպքում, երբ մարդը կատարյալ խաղաղության մեջ է Աստծո հետ եւ ճանաչում է Նրան. «...գիտելի է, զի գիտութիւն ըստ ճշմարտութեան եւ իսկականի ճանաչման է Աստուծոյ եւ խաղաղութեան ընդ նմա»³: Այս տեսակետի արմատները խարսխված են ինչպես հին եբրայական, այնպես եւ հունական իմաստասիրության ավանդույթների վրա: Պլատոնի համար Տիրոջ հետ խաղաղության մեջ լինելը Նրանից պարզեւ ստանալու նախապայմանն էր. «Մենք պետք է խաղաղության մեջ լինենք Աստծո եւ մեզ հետ, եւ [այն ժամանակ] պատե՞րազմում հաղթանակածի նման կհավաքենք մեր պարգեւները ինչպես այս կյանքում, այնպես եւ մեր հազարամյա ճանապարհորդության ժամանակ»⁴:

Հակոբ Նալյանը Միրաքի գրքի ԻԴ. գլխի «անձնավորված իմաստությունը» համեմատում է վարդապետի հետ: Հավանաբար, նա նկատի ունի Հիսուս Քրիստոսին, որ բազմաձև գահին՝ մարդկանց հրավիրում է խնջույքի⁵: Այդուհանդերձ, Միրաքի գրքի (ԻԴ. 29) եւ նորկտակարանյան իմաստությունները հստակ տարբերակված են Հովհաննու Ավետարանի Դ. 13-ում: Միրաքի Իմաստության ԻԴ. 29-ում ասվում է. «Ոյք ուտեն զիս՝ տակաւին քաղցիցեն, եւ ոյք ընպեն զիս՝ տակաւին ծարաւեցին»: Ի հակադրություն՝ Հովհ. Դ. 13-ում Քրիստոս ասում է. «...բայց որ ընպէ ի ջրոյն զոր եւ տաց նմա, մի՛ ծարաւեցէ յաւիտեան...»: Այն, ինչ խոստանում է Միրաքի գիրքը, չի կարող հավիտենապես հագեցնել «ծարաւը», ուստի ով ընպի դրանից, «տակաւին ծարաւեցի»: Սակայն, Քրիստոսի «ջուրը» իր գործությամբ հավիտենական է, եւ դրանից ավելին փնտրելու անհրաժեշտություն չկա:

Այս խնդիրը մեկ այլ դիտանկյունից ուսումնասիրելով՝ կարող ենք ենթադրել, որ Միրաքի Իմաստության ԻԴ.-ում խոստացված «ջուրը» նույնն է, ինչը որ Քրիստոս խոստացավ՝ ներկայացված տարբեր ժամանակաշրջանում եւ բոլորովին այլ շարակարգում: Այսինքն՝ մարդն իր երկրավոր կյանքի ընթացքում մշտապես ջրի կարիք ունի, սակայն չար ու անմիտ աշխարհը կարող է մոլորեցնել եւ խոտոր ճանապարհներով տանել նրան, ով խմել է այդ ջրից⁶:

3 Մատենադարան, Ձեռ. 1014, 1771, էջ 5բ:

4 Plato, *The Republic*, transl. with an introduction by H. D. P. Lee Middlesex, 1955, p. 401.

5 Տե՛ս Մատենադարան, Ձեռ. 1014, 1771, էջ 448բ:

6 Տե՛ս J. Gill, *An exposition of the New Testament, in three volumes: in which The Sense of the Sacred Text is given; Doctrinal and Practical Truths are set in a plain and easy Light, Difficult Places Explained, Seeming Contradictions Reconciled; Whatever is Material in the Various Readings, and the several Oriental Versions, is observed. The Whole illustrated with Notes taken from the most ancient Jewish Writings*, vol. 1, London, 1746-1748, էջ 711:

Արդյունքում՝ մարդը կրկին կարիք է ունենում «շրի» (իմաստության), որ «որպես ինքի կարկառի»⁷ եւ չդառնա «յանգզամութիւն»⁸:

Առակաց գրքի Թ. գլխում իմաստությունը համեմատվում է հարուստ կնոջ հետ. «Իմաստութիւն շինեաց իւր տուն, եւ կանգնեաց սիւնս եօթն: Զեն զգնելիս իւր, եւ խառնեաց ի խառնելիս զգինի իւր, պատրաստեաց զսեղան իւր: Եւ առաքեաց զծառայս իւր, կոչել թարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր՝ եւ ասէ. Որ ոք իցէ անգամ, եկեացէ առ իս: Եւ ցարկասամիտուն ասէ. Եկայք կերայք ի հացէ իմմէ, եւ արբէք զգինի իմ զոր խառնեցի ձեզ» (1-5):

Եւ Սիրաքի, եւ Առակաց գրքի հերոսները այլոց հրավիրում են մասնակցելու իրենց խնջույքին. «Մատերո՛ւք ամենեքեան, ոյք ցանկացեալ էք ինձ եւ յարմտեաց իմոց յագեցարութ» (Սիր. ԻԴ. 26). «Եկայք կերայք ի հացէ իմմէ, եւ արբէք զգինի իմ զոր խառնեցի ձեզ» (Առակ. Թ. 1): Երկու հրավիրողների միջեւ միակ տարբերությունն այն է, որ առաջինը հրավիրում է բոլորին, իսկ երկրորդը՝ միայն նրանց, որ «անգզամ» են եւ չեն կարողանում լցվել իմաստությամբ:

Հ. Նալյանը Սիրաքի Իմաստության ԻԴ-ի այս հատվածը ներկայացնում է որպես հրավեր, որ հնարավորություն կընձեռի «երկրակոխաց»՝ գիտեմալու իմաստության մասին եւ որպես արդյունք՝ տիրապետելու դրան. «Զանգի իմաստութիւն թէպէտ ըստ ինքեան պայծառ է եւ ընդ արեգակն համեմատել առաւել գոտանի իմաստութիւն, սակայն յերկրակոխաց ոչ ճանաչի գեղեցկութիւն նորա»⁹: Դրվատելով իմաստության մեծությունը՝ Հ. Նալյանը ժխտում է էպիկուրյանների՝ երջանկության սխալ ըմբռնումը եւ այն գուտ հաճույքի աղբյուր ընկալելը: Ըստ նրանց՝ երջանկությունը մարդկային գոյության կարեւորագույն հանգուցակետն է. այն հիմնված է բացառապես զգայականության ու ազատության (ամենաթողության) վրա¹⁰: Հ. Նալյանը մատնանշում է, որ իմաստություն ձեռք բերելը դյուրին չէ, եւ նրանք, որ փորձում են առանց մեծ ջանքերի հասնել իմաստության, իրենց ճանփորդությունը կավարտեն՝ ունենալով դատարկ միտք ու հոգի: Նա մերժում է նաեւ ստոիկյան իմաստասիրությունը եւ նկատում՝ պարզապես անկարելի է, որ մեր կյանքը ճակատագրի կողմից տնօրինվի, քանի որ միայն Բարձրյալը իշխանություն ունի Իր ողջ արարչության վրա, եւ աշխարհում ամեն բան տեղի է ունենում Սուրբ Հոգու բազմողորմ կամքով¹¹. «Արդ, իմաստութիւն յայնապէս առաւել. նախ, նշանակէ զանհուն իմաստութիւն Աստուծոյ,

7 Սիր. ԻԲ. 7:

8 Բագրատունին թարգմանում է հունարեն «ἄφρων»-ից:

9 Մատենադարան, Չեռ. 1014, 1771, էջ 448ա:

10 Տե՛ս J. Warren, *The Cambridge Companion of Epicureanism*, Cambridge, 2009, էջ 1-2:

11 Տե՛ս Մատենադարան, Չեռ. 1014, 1771, էջ 448բ. T. Brennan, *The Stoic Life: Emotions, Duties, and Faith*, Oxford: Clarendon Press, 2005, էջ 236-37:

որով Աստուած զարարածս ստեղծ. զի Աստուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի: Զի՞նչ մեծագոյն քան զիմաստութիւն, որ զամենայն ինչ առնէ իմաստութեամբ»¹²: Այդուհանդերձ, արեւմտյան որոշ հեղինակներ չեն բացառում Սիրաքի՝ ստոիկյան իմաստասիրությունից ազդված լինելը: Որպես այս տեսակետի ապացույց՝ հաճախ բերվում է Սիրաքի ԽԳ. 27-ի «τὸ πᾶν ἐστὶν αὐτό» («Նա է ամենայն») հատվածը, որը կարծես ակնարկում է Սիրաքի ապրած ժամանակաշրջանում հրեական միաջալայրում լայն տարածում գտած համաստվածյան (πανθεϊσμός) ընկալումների ազդեցությունը աստվածաշնչյան այս գրքի վրա:

Հ. Նալյանն իր մեկնության մեջ կիրառում է Ոսկան Երեւանցու՝ 1666 թ. հրատարակած Սիրաքի Իմաստության բնագիրը, որում ԽԳ. 27-ը համապատասխանում է ԽԳ. 29-ին: Վերոնշյալ հատվածն այս բնագրում թարգմանված է՝ «Ինքն է ներ ամենեցուն» (in omnibus), եւ հեղինակը համապատասխանաբար իր մեկնությունը կառուցում է Աստծո՝ մարդկանց մեջ հավիտենապես բնակություն հաստատելու ուղղահավաստ վարդապետության վրա: Այս հատվածի մեկնության մեջ հեղինակը հստակ շեշտադրում է Աստծո՝ Դավիթ մարգարեի, Սողոմոնի, ինչպես նաեւ Սիրաքի իմաստության աղբյուրը լինելու հանգամանքը՝ ցույց տալով, որ Աստված հոգեւոր էություն է, հետեւաբար, բնակություն է հաստատում մարդկանց, այլ ոչ թե իրերի մեջ: «Զանգի եթէ Դաւիթ քան զՍիրաք վճիտ եւ պարզագոյն մարգարէութիւն ունէր, տակաւին անբաւական զանձն իւր համարելով ասէր «սքանչելի եղեւ գիտութիւն քո յինէն, զօրացաւ եւ ոչ հանդարտեմ սմա»: Եւ Սողոմոն որ զինչ եւ ծածուկ, եւ յայտնի գիտել խոստանայր, տակաւին զգիտութիւն արարածոց ասէր իբրեւ ոսկերք յորովայնի հղոյ, նոյնպէս ոչ գիտացեա զարարածս Աստուծոյ, զոր ինչ առնիցէ զամենայն: Իսկ կատարած խօսից՝ Ինքն է ներ ամենեցուն, քանզի պատճառելեաց տարածայն տեսակքն եւ անթիւ նորին անհատիցն կուտակութիւնք ոչ չափին, եւ ընդ իմացմամբ, եւ զգայութեամբք անկանին, ուրեմն առ այն միակն ամենայն, ի սկիզբն ի վախճանն ամենեցուն ի պարունակողն զամենայն գերբնապէս դառնալի է, եւ առ աղբիւրն յուսոյ դառնալի է»:

Զ. Հասպեքերի մոտեցմանը, թե Սիրաքի Իմաստության գլխավոր թեման Տիրոջ նկատմամբ երկյուղն է, հակադարձում է այս գրքի ուսումնասիրության կաթոլիկ ժամանակակից ամենահայտնի հեղինակներից Ալեքսադր Դի Լեւլան. վերջինս, քննելով Սիրաքի գրքում արծարծվող առաջնային թեմաները, եզրահանգում է, որ այստեղ հիմնարար գաղափարը իմաստությունն է՝ նույնացված օրենքի հետ, եւ այն կարող է ձեռք բերել նա, ով երկյուղ ունի

¹² Մատենադարան, Ձեռ. 1014, 1771, էջ 448բ:

Տիրոջ նկատմամբ ու պահում է Նրա պատվիրանները¹³: Ա. Դի Լելլան, ընդհանուր առմամբ, հետեւում է գերմանացի Ռուդոլֆ Սմենդի այն տեսակետին, որ «... *ենթակայորեն իմաստությունը Տիրոջ նկատմամբ երկյուղն է, իսկ առարկայորեն (օրյեկտիվորեն)՝ Մովսեսի օրենքը*»¹⁴: Մասնակիորեն համաձայնելով այս մոտեցմանը, այդուհանդերձ, կարծում ենք, որ Սիրաքի գրքի հիմնարար գաղափարը ոչ թե *իմաստությունն է*, այլ՝ *երջանկությունը*: Այստեղ առաջադրվող երջանկությունը չպետք է շփոթել էպիկուրյան՝ զգայականությունից բխող «*երջանկության*» հետ¹⁵, այլ պետք է ընկալել որպես վերջնական միավորում Արարչի հետ: Սուրբ Գրքի ժամանակակից մի շարք ուսումնասիրողներ պնդում են, որ Սիրաքը չի հավատացել երկնային կամ հավիտենական կյանքին, հետեւաբար, նա չէր կարող որպես *իմաստության* ու *երջանկության* կատարյալ վիճակ ներկայացնել Արարչի հետ հետմահու միավորումը: Սակայն, Սիրաքի Իմաստության ԽՁ. 12 եւ ԽԹ. 10 համարներում հեղինակը խոսում է դատավորների ոսկորներից կյանք ստանալու մասին՝ «*ἐκ τοῦ τόπου αὐτῶν*» (բառացի՝ *նրանց տեղից*, կամ՝ *այնտեղից, ուր նրանք կան*): Այս հատվածը, որ պահպանված չէ անգամ Սիրաքի գրքի՝ Դուրյանի եւ Աբգարյանի գտած հայերեն հատվածներում, թույլ է տալիս ենթադրել, որ Սիրաքը, եթե ոչ լիակատար, ապա որոշ պատկերացումներ ունեցել է հանդերձյալ կյանքի մասին: Նաեւ, որպես հրեական օրենքի ու մարգարեների եռանդուն հետեւորդ, նա, անտարակույս, պետք է տեղյակ լիներ Ենոքի պատմությանը, որ երկինք էր տարվել ի կյանս¹⁶: Այս առումով, մասնավորապես հետաքրքիր է Հ. Նալյան պատրիարքի բացատրությունը «*երանկալ*»-ի վերաբերյալ, որը վերջինս իր մեկնության մի շարք գլուխներում գործածում է ի տեղի «*երջանկություն*» բառի: Պատրիարքն ընդգծում է, որ իմաստությունը գալիս է Տիրոջն օրհնաբանելով եւ որպես արդյունք՝ օրհնված լինելով Նրա կողմից: Ապա հավելում է, որ օրհնաբանելու եւ օրհնվելու այս ընթացքն ինքնին *երջանկություն է*¹⁷: Նմանօրինակ գործածության հանդիպում ենք Սիրաքի ԺԴ. 20-ում¹⁸. «*Երանկալ է այր, որ*

13 Տե՛ս P. W. Skehan, A. A. Di Lella, *The Wisdom of Ben Sira*, USA: Yale University, 2010, էջ 76. հմմտ. J. Haspecker, *Gottesfurcht bei Jesus Sirach: Ihre religiöse Struktur und ihre literarische und doktrinaire Bedeutung*, AnBib 30, 1976, էջ 87-105:

14 Տե՛ս R. Smend, *Die Weisheit des Jesus Sirach, hembräisch und deutsch*, Berlin: Reimer, 1906, էջ xxiii:

15 Էպիկուրը հայտնի «Թուղթ առ Մանիքեոս» աշխատության մեջ տալիս է երջանկության հետեւյալ բնորոշումը. «Հաճույքը մեր առաջին ու հարագատ բարիքն է: Այն ամեն ընտրության ու ժխտման սկիզբն է, եւ մենք միշտ դառնում ենք դրան այնքանով, որքանով զգայականությունը դարձնում ենք իշխող ու քննող ամեն բարիքի». հմմտ. J. Warren, *The Cambridge Companion of Epicureanism*, էջ 187-188:

16 Ծննդ. Ե. 24:

17 Տե՛ս Մատենադարան, Ձեռ. 1014, 1771, էջ 296ա:

18 Հակոբ Նալյանի մեկնության մեջ՝ Սիր. ԺԴ. 22:

ներ իմաստութեան յամիցի, եւ որ յարդարութեան իւրում մտածիցէ, եւ ի զգօնութեան խորհեացի զշրջադիտութեան Աստուծոյ»:

Սիրաքի գրքի Ա. 1-ի «Ամենայն իմաստութիւն ի Տեսողն է» սկսվածքը մատնանշում է՝ Աստծո մեջ է ողջ իմաստությունը, որից եւ Նա շնորհում է նրանց, որոնք կատարում են Իր կամքը՝ ներկայացված Օրենքում եւ անթեղված Իր նկատմամբ ունեցած երկյուղի մեջ: Սիրաքն իր գրքում փառաբանում է իմաստությունը՝ երբեմն անձնավորելով այն. «Եւ ի բերանոյ Բարձրելոյն էլի, եւ իբրեւ զմէզ ծածկեցի զերկիր»¹⁹: Ակնհայտ է, որ իմաստությունն այստեղ առաջադրված չէ որպէս երջանկության նպատակ, այլ պարզապէս գործիք է, որի միջոցով կարելի է հասնել երջանկության. «Այր իմաստուն լցցի օրհնութեամբ, եւ երանեացեն նմա բազումք՝ որ հային ընդ նա»²⁰:

Սիրաքի Իմաստության մասին խոսելիս Զեկ Սանդերսն իր մեծարժեք աշխատության մեջ նշում է, որ աստվածաշնչյան այս գրքի ուսումնասիրությանը զբաղվողները նկատել են հաջողության, երջանիկ ու բարեբախտ ապրելու նկատմամբ հեղինակի ցուցաբերած առանձնակի ուշադրությունը: Զ. Սանդերսն անգամ Սիրաքի այս միտումը փիլիսոփայական եզրույթով բնութագրում է որպէս «բարեկենդանություն» (*eudemonism*)²¹: Այդուհանդերձ, նա չի քննարկում Սիրաքի գրքում արծարծված ու մեր կողմից առաջադրված՝ *երջանկության (felixial)* գաղափարի գերակա լինելու հանգամանքը:

Առակաց գիրքը, որ Սիրաքի Իմաստության հիմնական աղբյուրներից է եղել, հստակ ներկայացնում է *երջանկության* բնույթը եւ ցույց տալիս, թե ինչ հարաբերության մեջ են իմաստությունն ու երջանկությունը. «Երանեալ է այր, որ եզիտ իմաստութիւն»²²: Մարդը չի կարող հասնել երջանկության, եթե չգնա իմաստության ետեւից. ընդսմին, միայն իմաստությունը բավարար չէ, այլ այն մեկն է բազում նախապայմաններից, որ կերտում են *երջանիկ* մարդուն: «Իբրեւ զի մեծ է՝ որ եզիտ իմաստութիւն. այլ ոչ է առաւել, քան զերկիրիս զածն է Տեսողն»²³. այս համարում Սիրաքն ընդգծում է, որ իմաստությունն ու Տիրոջ նկատմամբ երկյուղն իրենց կարեւորությամբ գրեթե նույն հարթության վրա են: Տիրոջ նկատմամբ երկյուղը որոշ պարագաներում նույնացված է իմաստության հետ²⁴, իսկ որոշ դեպքերում անգամ առավել բարձր հարթության վրա է: Ուստի, ինչպէս Ռիչարդ Քոզմիսն է նկատում. «Տիրոջ նկատմամբ երկյուղի ու իմաստության միջեւ որեւէ սահմանազատում դնելը, ինչպէս նաեւ առաջինը լոկ որպէս վերջինի

19 Հունարեն բնագրում՝ Սիր. ԻԴ. 5, ԻԴ. 3:

20 Հունարեն բնագրում՝ Սիր. ԼԶ. 25, ԼԷ. 24:

21 Տե՛ս J. T. Sanders, *Ben Sira and Demotic Wisdom*, California: Scholars Press, 1983, էջ 9:

22 Առակ. Գ. 13:

23 Սիր. ԻԵ. 13:

24 Տե՛ս Սիր Ա. 16, 27. հմմտ. G. Von Rad, *Wisdom in Israel*, London: SCM Press, 1972, էջ 243:

դրսեւորում ընկալելը հիմնարար սխալ է (հմմտ. Միր. Ա. 14)²⁵: Այս եւ մի շարք այլ հիմնավորումներ նկատի ունենալով՝ առաջադրում ենք Միրաքի գրքի՝ *երջանկության* հիմնարար գաղափարի շուրջ կառուցված լինելու իրողությունը:

Ոչ իմաստությունը, ոչ Տիրոջ նկատմամբ երկյուղն ու սերը, ոչ էլ Օրենքը Միրաքի գրքի որեւէ գլխում ներկայացված չեն որպես անձի վերջնական նպատակակետ: Կատարյալ մարդը՝ օրինյալ անձը, նա է, ով *երջանիկ է*՝ իմաստության խորհուրդները զանելու, Տիրոջ նկատմամբ երկյուղ ունենալու եւ Նրա պատվիրանները պահելու միջոցով: Անգամ Միրաքի թոռը, որ առաջին անգամ այս գիրքը եբրայերենից թարգմանել է հունարեն ու գրել առաջաբանը²⁶, *իմաստությունը* չի առանձնացրել որպես գրքի շարադրման հիմնական դրդապատճառ: Նա վկայում է, որ Միրաքը «...կամեցաւ եւ ինքն գրել զայլիմն նոցա. որք... իմաստութեան պատկանի. զի ցանկացողքն ուսման՝ եւ նոցա հմուտ եղեալք առաւել՝ եւս առաւել զգուշացին հոգւով: Եւ յաւերժ հաստատեցին առ օրինասրահութեան կենաց»²⁷:

Հայտնի գիտնականներից գերմանացի Գերհարդ վոն Ռադն իր աշխատություններից մեկում գրում է. «Միրաքն իսկ գրքի վերջաբանում (Ծ. 27-29) ասում է, որ գրքի հիմնարար թեման իմաստությունն է, եւ ո՛չ թե Տիրոջ նկատմամբ երկյուղը»²⁸: Վերլուծենք վերջաբանն ու պարզենք, թե որքանով է այս հիմնավորումը համապատասխանում իրականությանը:

Իր գրքի գլխավոր հատվածն ավարտելով Միրաքը պատգամում է. «Զուսումն իմաստութեան եւ գիտութիւն գրեաց ներ այսմ մատենիս Յեսու որդի Եղիազարայ որդի Միրաքայ երուսաղեմացի, որ յեղեաց զիմաստութիւն ի սրտէ իւրմէ: Երանեալ է՝ որ ներ այսոցիկ յարամնայ. որ դնէ զսոսա ի սրտոջ իւրում, իմաստուն եղիցի միշտ: Զի եթէ զսոսա արացէ, առ ամենեւեան կեցցէ, զի երկիրդ Տեսոն ընթացահետ է նորա»²⁹:

Վերոնշյալ երեք համարները առանձին հատվածների բաժանելով եւ դրանք համապատասխանաբար անվանելով՝ Ծ. 27-ը՝ «Ներածություն», Ծ. 28-ը՝ «Բուն հատված», Ծ. 29-ը՝ «Վերջաբան», կկարողանանք բացահայտել Միրաքի իմաստության բուն նպատակը: Ծ. 27-ում ամբողջ գիրքը ներկայացված է երեք հիմնական եզրերով՝ «*παιδείαν συνέσεως*» եւ «*ἐπιστήμη*»: Շա-

25 R. J. Coggins, *Sirach*, Sheffield: Sheffield Academic Press, 1998, p. 95.

26 Հայերեն ձեռագիր բոլոր մատյաններում ու տպագիր հրատարակություններում այս նախաբանը չկա՝ բացառությամբ Ռսկան Երեւանցու՝ 1666 թ. հրատարակության. այստեղ եւ նախաբանը, եւ գիրքը թարգմանված է լատիներենից: Այդուհանդերձ, Ռսկան Երեւանցու թարգմանության մեջ կարելի է նկատել Միրաքի գրքի հունարեն եւ ասորերեն թարգմանությունների ազդեցությունը:

27 Միր. «Նախաբան»:

28 G. Von Rad, *Wisdom in Israel*, p. 242.

29 Ըստ հեղինակի թարգմանության՝ Միր. Ծ. 27-29:

րակարգից դուրս այս բառերը որեւէ կերպ չեն հուշում գրքի հիմնական բնույթի մասին, միայն նշվում է, որ գիրքը ներկայացնում է «*գուստունն իմաստութեանն եւ գիտութիւնն...*»։ Նույն համարի երկրորդ մասը ներկայացնում է կենսագրական որոշ տվյալներ հեղինակի մասին, մասնավորաբար՝ նրա անունն ու ծննդավայրը³⁰. «*...գրեաց ներ այսմ մատենիս Յեսու որդի Եղիազարայ որդի Սիրաքայ երուսաղեմացի...*», ինչպես նաեւ բնութագրում է հեղինակին, «*...որ յեղեաց գիմաստութիւն ի սրտէ իւրմէ*»:

Սիրաքի Իմաստության Ծ. 28-ում լուսաբանվում է գրքի բուն թեման. «*Երանեալ է՝ որ ներ այսոցիկ յարամնայ. որ դնէ գոտսս ի սրտոց իւրում. իմաստուն եղիցի միշտ*»։ Երանությունը կամ երջանկությունը եւս մեկ անգամ, ինչպես ներկայացված է հունարեն բնագրերում, ընդգծվում է որպես «*ամենայն իմաստութեանն եւ գիտութեանն*» դրդապատճառ ու նպատակ։ Իմաստուն մտքերի եւ գործերի արդյունքում մարդը վերանում է «հասարակ» հարթությունից, սկսում իրերին ու դեպքերին միջամտիս լինել։ Երբ իմաստությունը բյուրեղանում է մարդկային արարքների ու մտածումների մեջ, եւ անձը քաղում է ցանաժի պտուղները, այնժամ զգում է իր իմաստության ողջ վեհությունն ու որպես արդյունք՝ լինում երջանիկ։

Այս հատվածի վերջին՝ Ծ. 29 համարը պարզաբանում է, թե ինչ արդյունքի է հասնում մարդը. «*...իմաստուն եղիցի միշտ, զի եթէ գոտսս արասցէ. առ ամենեւեան կեցցէ. զի երկիւղ Տեսոն ընթացահեռ է նորս*»:

Ծննդոց գրքի մի հատվածի վերլուծությունը կարող է ցույց տալ, որ միայն իմաստության ձեռքբերումը երբեմն կարող է կործանարար լինել մարդու համար. Ադամի ու Եւայի պատվիրանազանցության եւ արտաքսման պատմությունն այդ մասին է վկայում։ Արեւելյան որոշ պատումներից գիտենք՝ օձը երբեմն ներկայացված է որպես խորագիտության եւ իմաստության մարմնավորում, որը ստորգետնյա խավարից իմաստություն է բերում աշխարհ³¹։ Ծննդոց Ա.ԺԱ. հատվածը ներկայացնում է, որ օձի «առաքելությունը» առաջին արարածներին «*իմաստնացնէին*» էր, որպեսզի վերջիններս կարողանային ճանաչել բարին ու չարը։ Ինչպես գիտենք, «ճակատագրական» պտուղը իմաստուն դարձրեց նախածնողներին, սակայն դա իմաստություն էր, որ նրանց մահկանացու դառնալուն դատապարտեց։

30 Առհասարակ, Աստվածաշունչ մատյանի գրքերի հեղինակները, որպես օրինաչափություն, իրենց անունները չեն նշում գրքում, եւ նրանց մասին տեղեկություններ ստանում ենք կամ սրբազան ավանդությունից, կամ բնագրային համապատասխան վերլուծություն անելու արդյունքում։ Սիրաքի Իմաստությունն այն քիչ գրքերից է (նաեւ՝ Հեսու ԻԶ. 24, Առակ. Ա. 1, Դանիել ԺԲ. 4), որ ուղղակիորեն ներկայացնում է հեղինակի անունը (այս պարագայում հենց հեղինակի կողմից եւ առաջին դեմքով)։

31 Տե՛ս J. Blenkinsopp, *Wisdom and Law in the Old Testament: The Ordering of Life in Israel and Early Judaism*, Oxford: Oxford University Press, 1995, էջ 7-8:

Ըստ Սիրաքի Իմաստության գրքի՝ բաղձալի *երջանկության* հասնելու մեկ այլ նախապայման է Տիրոջ նկատմամբ սերը, որը հեղինակը գործածում է որպես Տիրոջ նկատմամբ երկյուղի հոմանիշ³²: «*Երկիրդածք Տեսոն հնազանդ լիցին բանից Նորա. եւ որ սիրեն զՆա՝ պահեն զպատուիրանս Նորա: Երկիրդածք Տեսոն խնդրեսցեն զհաճոյս Նորա, եւ որ սիրեն զՆա լցցին յօրինաց Նորա*»³³: «*Հնազանդ լիցին*» եւ «*պահեն զպատուիրանս*» արտահայտություններն այստեղ նույնիմաստ են, քանզի ով պահում է Տիրոջ խոսքը, չի շեղվում Նրա ճանապարհներից:

Տիրոջ նկատմամբ սիրո գաղափարի կարեւորությունը առավել պատկերավոր ընկալելու համար վերլուծենք մեկ այլ գիրք՝ Երգ Երգոցը: Սողոմոնը, որ համարվում է Երգ Երգոցի հեղինակն ու Հին Կտակարանի «թագաւորական իմաստութեան մարմնաւորողը»³⁴, հայտնի էր ոչ միայն իր թագավորությունում, այլ նաեւ օտար երկրներում. «*Եւ զային ամենայն ազգք լսել զիմաստութիւնն Սողոմոնի եւ յամենայն թագաւորաց երկրի, որ լսէին զիմաստութիւնն նորա*»³⁵: Նրան վերագրված գրքերի շարքում Երգ Երգոցը թերեւս ամենայնորահատուկն է. այս գրքի բացառիկ բնույթը առավել նկատելի է դառնում, երբ այն համեմատվում է աստվածաշնչյան որեւէ այլ գրքի հետ: Ոճը, որով այն գրված է, եւ գործող երկու անձի միջեւ սիրո նկարագրության համար բերված փոխաբերություններն այս գիրքը դարձնում են եզակի նաեւ գրականության տեսանկյունից: Այդուհանդերձ, իհնչ է իրականում այս գրքի հեղինակը փորձում փոխանցել իր ընթերցողին: Արդյո՞ք սա մի պարզ սիրո նկարագրություն է, թե՞ ավելին: «*Ես եղբորորդւոյ իմոյ՝ եւ առ իս դարձ նորա: Ե՛կ, եղբորորդի իմ, ելցուք յագարակս, ազցուք ի շէնս եւ ի պարտեզս, կանխեսցուք յայգիս: Տեսցուք թէ ծաղկեա՛լ իցէ որթ, թէ ծաղկեա՛լ իցէ նոճ, թէ ծաղկեա՛լ իցէ նոնենի, ա՛նդ տաց զստինս իմ քեզ*»³⁶: Այս հատվածն իրական ու կատարյալ երջանկության արտահայտությունն է: Երգ Երգոցը Սողոմոնին վերագրված գրքերի շարքում վերջինն է: Առակացն ու Իմաստությունը, որ նախորդում են վերջինիս, արդեն իսկ ձեւավորել են կատարյալ մարդու գաղափարը, որի՝ կյանքի համանվազն իր հանգուցալուծմանն ու գազաթնակետին է հասնում սիրո այս արտահայտությամբ՝ ներկայացված Երգ Երգոցում: Միությունը նրա հետ, ում սիրում ես, գոյության նպատակն է. չկա կյանք առանց միության:

Բազմաթիվ կարծիքներ են եղել՝ կապված Երգ Երգոցի այս երկու կերպարի հետ: Զրիստոնեսական մեր մոտեցումն այն է, որ երկու «սիրեցյալները»

32 Տե՛ս W. Skehan, A. A. Di Lella, *The Wisdom of Ben Sira*, էջ 78:

33 Հունարեն բնագրում՝ Միր. Բ. 18-19, Բ. 15-16:

34 J. Blenkinsopp, *Wisdom and Law in the Old Testament*, p. 2.

35 Գ. Թագ. Դ. 34:

36 Երգ. Է. 10-12:

Քրիստոսն ու Եկեղեցին են³⁷: Հակոբ Նալյանը պատգամում է պահել Տիրոջ նկատմամբ ունեցած սերն ու Նրա պատվիրանները՝ նկատելով, որ այդ սերն է, որ մեզ կարող է դարձնում հետեւելու Նրան ու պահելու պատվիրանները³⁸: Պատրիարք Հ. Նալյանը, կապակցելով Տիրոջ հանդեպ ունեցած սերը Նրա նկատմամբ անպայմանական վստահության հետ, գրում է, որ բոլոր պարգեւները, ինչպես նաեւ պատիժները պետք է ընդունվեն «խնդրեալ սրտիւ եւ շնորհակալ մտօք», քանզի եւ պարգեւը, եւ պատիժը Աստծո՛ իր արարածների նկատմամբ իսկական սիրո ու հոգատարության արտահայտությունն է: «Որք երկիւղածք եւ պարգեւի Հոգւոյն Սրբոյ ընդունակք ոչ լինին անհնազանդք բանից Աստուծոյ, եւ հրամանաց Նորա ո՛չ երկբային, ո՛չ յուսահատին ի փորձելն եւ ո՛չ փքանան ի պարգեւատրեն, այլ որոց ի նոցանէ եւ զի կացութեան եւ հանդիպին, յամենայնում շնորհակալք լինին զնմանէ, զի զամենայն գոր եւ ընդունին ի նմանէ (եթէ շնորհս, եւ եթէ փորձութիւնս) զբոլորն պարգեւ համարին... Եւ Պօղոս ասէր, ուրախ եմ ընդ չարչարանս եւ ընդ նեղութիւնս, զի նեղութիւնք զհամբերութիւն գործեն: Այլ զի երկիւղածքն հնազանդին Աստուծոյ, որոյ ի հնազանդիւն յայտնին գոյ երկիւղածք, այսպէս եւ նշան սիրողաց նորա է պահպանութիւն ճանապարհաց նորա, զի Աստուած ոչ սիրի բանիւ միայն, այլ արդեամբք եւ ճշմարտութեամբք...»³⁹:

Այս հատվածում Հ. Նալյանը փորձում է որոշակիացնել Տիրոջ նկատմամբ երկյուղի բնորոշիչ հատկությունները: Իր վերլուծությունը խարսխելով հայրաբանական ավանդության վրա՝ հեղինակը գրում է, որ Աստծո հանդեպ երկյուղը լոկ վախ չէ, այլ ակնածանք՝ շաղախված սիրով: Սիրաքն արդեն իսկ դրել է Տիրոջ նկատմամբ երկյուղի ու սիրո ամուր կապի գաղափարի հիմքը. «Երկիւղ Տեսոն սկիզբն սիրոյն Նորին»⁴⁰: Այս առնչությամբ Հ. Նալյանը մատնանշում է երկյուղի ու սիրո գործնական կիրառության մի շարք օրինակներ՝ Սիրաքի գրքի բազմաթիվ հատվածներ աղերսելով ավետարանական մեջբերումների հետ:

Պանկրատիոս Բինթչեսը, որ հրատարակել է Սիրաքի Իմաստության եբրայերեն ամբողջական բնագիրը⁴¹, այս գրքի առաջին հատվածի վերջին գլուխներից երեք համար է մեջբերում, որոնք համարում է «Տիրոջ նկատմամբ երկյուղի գաղափարի ընկալման ելակետ». Սիր ԺԹ. 20՝ «Ամենայն իմաստութիւն երկիւղ Տեսոն եւ յամենայն իմաստութեան՝ լրումն օրինաց»,

37 Տե՛ս **M. W. Elliott**, *The Songs of Songs and Christology in the Early Church*, 381-451, Wipf & Stock Publishers, 2011:

38 Տե՛ս Մատենադարան, Ձեռ. 1014, 1771, էջ 42բ:

39 Անդ:

40 Սիր. ԻԵ. 12. այս համարն առկա է միայն Ոսկան Երեւանցու թարգմանության մեջ:

41 Տե՛ս **P. C. Beentjes**, *The Book of Ben Sira in Hebrew: A Text Edition of All Extant Hebrew Manuscripts and a Synopsis of All Parallel Hebrew Ben Sira Texts*, Leiden: Brill, 1997:

ԻԱ. 12-13՝ «Որ ստիտ գորենս, իշխէ մտաց իւրոց եւ վախճան երկիւղի Տեառն իմաստութիւն», ԻԳ. 27՝ «...զի ոչ ինչ է լաւ քան զերկիւղ Տեառն, եւ ոչ ինչ քաղցրագոյն քան զգնել միտ պատուիրանացն Տեառն»:

Այս համարները չափազանց կարեւոր են, քանզի ամփոփում են Սիրաքի՝ իմաստութեան, Տիրոջ նկատմամբ երկյուղի եւ Օրենքի վերաբերյալ եռակազմ աստվածաբանությունը: Հ. Նալյանն այս երեքի միասնական լինելու վերաբերյալ տալիս է հիմնարար բացատրություն. «...գլխնդիմանելին ի միտ քեռելով զերկիւղն Աստուծոյ, որ է սկիզբն իմաստութեան, զի վասն ոյր կրթի մարդ յօրէնս Աստուծոյ, ո՛չ գեւեթ, ո՛չ վասն սիրոյն, գոնէ վասն երկիւղին Աստուծոյ զախոս մեղաց մեռուացէ»⁴²: Սա մի հետաքրքիր ակնարկ է Պատմոնի իմաստասիրությունից, ըստ որի, մարդ կարող է իմաստնանալ՝ մահվան մասին մտածելով իսկ: Ըստ Հ. Նալյանի՝ Սիրաքի կողմից Տիրոջ նկատմամբ երկյուղը, որպէս իմաստութեան լրում կարեւորելու պատճառն այն է, որ «...նովա խորշի ամենայն ոք ի չարէ ներկայիս»: Մեկնության հեղինակը բացատրում է երկյուղի կարեւորությունը. «Ուստի եւ մանկունք զաւագանաւ զանին վասն ներկայի յանցանաց, զի զգուշացին եւ յապառնի սխալմանէ, եւ անկասկածք լիցին ի պատժոյն: Քանզի խրատողն եւ յանդիմանողն, երկիւղին Աստուծոյ յանդիմանելոց է, եւ ոչ յախտէ քարկութեան: Ո՛չ զի ինքն մաքրեալ իցէ ի յանցանացն՝ զոր դատէ ի յայլսն, զի ի թիւր քանոնէ ոչ կրանէ զիծ ուղիղ»⁴³:

Ինչպէս նկատեցինք վերոնշյալ քննարկման մեջ, Սիրաքի գրքում իմաստությունը, Տիրոջ նկատմամբ երկյուղը եւ Օրենքը այնպիսի անքակտելի միասնությամբ են ներկայացված, որ հաճախ անկարելի է տարբերել, թե դրանք էրբ են սկսվում եւ որտե՞ղ են ավարտվում *եղջանիկ մարդ* կերտելու ամվերջանալի գործընթացում: Այս պարագայում Հակոբ Նալյանն իր եզակի մեկնությամբ պարզաբանում է, որ այս հատկանիշները միաժամանակ ու համընթաց ուրվագծում են մարդու «զարտկերն կենաց», ցույց տալիս եղջանկության եւ բարօր կյանքի համար իրենց նախապայման լինելը:

42 Մատենադարան, Ձեռ. 1014, 1771, էջ 377ա:

43 Անդ:

РЕЗЮМЕ

В данной статье автор обсуждает некоторые ключевые темы, представленные в книге Премудрого Иисуса, сына Сираха. Широкий объем тем затронутых в книге Сираха охватывает такие вопросы как: осмотрительность и самодисциплина (гл. 18-23), похвала мудрости (гл. 24), биографические рассказы о предках Израиля (гл. 44-50), и т.д.. Эта статья сосредотачивается на определении главной темы Сираха, являющейся частью литературы мудрости Библии, написанной на заре 2-го века до н.э. Основной целью автора является демонстрация того, что важнейшая тема книги Сираха "счастье" а не "мудрость". На протяжении всей своей книги, Бен Сира предлагает три основные предпосылки для, как он определяет, счастливого человека. Эти предпосылки: мудрость, благоговение и соблюдение Моисеева Закона. Ни один из этих трех не представлен в виде более высокой добродетели по сравнению с двумя остальными, следовательно, все они имеют решающее значение на пути к счастью.

Автор статьи в качестве богословской основы для всей дискуссии использует комментарии на книгу Сираха, написанную известным армянским патриархом Константинополя, Акопом Нальяном (18-й век).

SUMMARY

In the current article the author elaborates on some key themes presented in the Wisdom of Sirach. The scope of Sirach is very broad, covering a large variety of topics, including exhortations on prudence and self discipline (chs. 18-23), praise of wisdom (ch. 24), biographical narratives about the ancestors of Israel (chs. 44-50). The Armenian text of Sirach does not contain these last chapters. So far, only two Armenian MSS have been discovered to contain fragments of this last section of Sirach), etc.. This study is concentrated on defining the primary subject of this piece of wisdom literature written at the dawn of the 2nd century B.C. Its main argument is that happiness and not wisdom is the suggested ultimate goal by Ben Sira. Throughout his lengthy book, Ben Sira proposes three main prerequisites for, as he defines, a happy person. These are: wisdom, fear of the Lord and the Mosaic Law. None of these three is presented as a higher virtue over the other two, hence, suggesting that all of them are of decisive importance in the journey toward happiness.

The author of the article anchors his argument to a commentary on Sirach written by a prominent 18th century Armenian Patriarch of Constantinople, Hakob Nalian, which is used as a theological basis for the entire discussion.